




*Հ.Մ.Ա.Կ.-ի
40-րդ Համահայկական
Իժադեր*

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ



Թեհրան 2008
Արարատ Մարգարյան



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

40-րդ համահայկական խաղերը բաղկացած է հետևեալ մարզաձևերից՝
բասկետբոլ , ֆուտբոլ, վոլեյբոլ, պինգ-պոնգ, թենիս, թեթև ասլետ, ճատրակ
և լող որոնց կանոնագրությունը ստորև կը ներկայացվի:

Ա. Բասկետբոլ - երկսեռ

1. Իւրաքանչիւր Միութիւն, խաղերին կարող է մասնակցել 3 տղայոց եւ 3 Օրիորդաց խմբերով:

Ծանօթ 1. Տղայոց բաժնում, իւրաքանչիւր Միութիւն կարող է մասնակցել 2 երիտասարդական եւ 1 աւագ խմբով: Միութիւնները, կարող են ներկայացնել 1 երիտասարդական եւ 2 աւագ խմբեր, սակայն երիտասարդական խումբ չներկայացնելու պարագայում՝ միայն կարող են ունենալ 1 աւագ խումբ:

Ծանօթ 2. Աղջկանց բաժնում, տարիքի սահմանափակում նկատի է առնել: Միութիւնները կարող են մասնակցել երիտասարդական եւ աւագ խմբով:

2. Երիտասարդական բաժնին կարող են մասնակցել այն մարզիկները, որոնք ծնւած լինեն 1.1.1990-ից (11.10.1368) յետոյ:

3. Իւրաքանչիւր խումբ, կարող է խաղերին ներկայացնել առաւելագոյնը 12 մարզիկ-ուհիներ:

4. Իւրաքանչիւր խումբ, պէտք է ունենայ երկու ձեռք միանման մարզական զգեստ՝ բաց ու մուգ գոյներով եւ 4-ից 15 թւանշաններով՝ փակցւած իւրաքանչիւրի կրօքին ու մէջքին:

5. Խաղերի նիշերը կը տրւեն ըստ հետեւեալի՝

ա. Յաղթանակ՝ 2 նիշ

բ. Պարտութիւն՝ 1 նիշ

գ. Բացակայ՝ 0 նիշ

6. Բասկետբոլի մրցութիւնները կը կատարուի համաշխարհային նոր կանոնների համաձայն:



Բ. Ֆուտբոլ

1. Իւրաքանչիւր Միութիւն, կարող է մասնակցել միայն 2 խմբերով՝ 1 երիտասարդական եւ 1 աւագ կամ 2 երիտասարդական խմբերով:
Սակայն երիտասարդական խումբ չներկայացնելու պարագայում՝ կարող են ունենալ միայն 1 աւագ խումբ:
2. Իւրաքանչիւր խումբ, կարող է խաղերին ներկայացնել առաւելագոյնը 18 մարզիկ, սակայն իւրաքանչիւր մրցութեան մասնակցողների անւանացանկը պէտք է առաւելագոյնը 16 հոգի լինի:
3. Երիտասարդական բաժնին կարող են մասնակցել այն մարզիկները, որոնք ծնւած լինեն 1.1.1990-ից (11.10.1368) յետոյ:
4. Իւրաքանչիւր խումբ, պէտք է ունենայ 2 ձեռք միանման մարզական զգեստ՝ բաց ու մուգ գոյներով, որոնց մէջքին պիտի փակցւած լինի թւանշան:
Դարպասապահի զգեստի գոյնը պէտք է տարբեր լինի խմբի եւ մրցութեան իրաւարարի զգեստից:
5. Իւրաքանչիւր խմբի մարզիկների զգեստների թւանշանները խաղերի ընթացքին պէտք է անփոփոխ լինի:
6. Իւրաքանչիւր խումբ, իր մրցութիւնը կարող է սկսել 7 հոգով եւ մինչեւ մրցութեան աւարտը կարող է լրացնել թիւը՝ համաձայն մրցութիւնից առաջ ներկայացրած անւանացանկի:
7. Իւրաքանչիւր խմբի պատասխանատուն ամենաուշը պէտք է 1 ժամ նախքան մրցութեան յայտարարւած ժամը ներկայ գտնուի մրցութեան վայրում և ստանայ մրցութեան անւանացանկը: Լրացւած անւանացանկը նւագագոյնը պէտք է կէս ժամ նախքան մրցութեան սկսելու ժամը յանձնուի ֆուտբոլի պատասխանատուին:
8. Եթէ մրցութեան ընթացքում, որեւէ խմբի մարզիկների թիւը ինչ որ պատճառով 7-ից պակասի, մրցութիւնը դադարեցնելով՝ խումբը ստացւած գոլերով գումարած 3-ի պարտւած կը յայտարարուի:
9. Խմբի աւագը, պէտք է իր թելին ունենայ յատուկ ժապաւեն, որով պէտք է տարբերուի միւս մարզիկներից:



10. Մրցութիւնների ընթացքին միայն 7 մարզիկ, խմբի մարզիչ, խմբի պատասխանատու և միութեան ընդհանուր պատասխանատուն իրաւունք ունեն նստելու դաշտի կողքին որոշուած տեղում:
11. Խաղերը (Երիտ, Երեց) տեղի է ունենալու 2 խաղակէտում իւրաքանչիւր 40 րոպէ , 15 րոպէ հանգստեան ժամով:
12. Իւրաքանչիւր խաղացող, որ գրկել է մրցութեան մասնակցելուց, դաշտ իջնելու դէպքում կը գրկւի նաեւ միւս խաղերից եւ այդ խաղի արդիւնքը 3-0 կը յայտարարուի:
13. Մրցութիւնները շրջանային աղիւսակով ընթանալու պարագայում՝ եթէ 2 կամ աւելի խմբեր հաւասար նիշեր ունենան, գոլերի տարբերութիւնը, այսինքն՝ ստացած գոլերը հանած նշանակածը կը ճշտի բարձրագոյն խմբին. եթէ կրկին անգամ հաւասար լինեն, այն խումբն է բարձրագոյն, որի նշանակած գոլերը աւելին լինեն. Նաև այս պարագային հաւասար լինելու դէպքում՝ այն խումբն է բարձրագոյն, որի ստացած գոլերը պակաս լինեն. կրկին հաւասար լինելու դէպքում՝ երկու խմբերի մրցութեան արդիւնքով կը ճշտուի բարձրագոյն խումբը:
14. Խաղերի նիշերը ըստ հետեւեալին է՝

ա. Յաղթանակ՝	3 նիշ
բ. Հաւասար՝	1 նիշ
գ. Պարտութիւն՝	0 նիշ
դ. Բացակայ՝	0 նիշ

Գ. Վոլէյբոլ - երկսեռ

- 1- Մրցութիւնները կատարուելու են համաշխարհային կանոններով:
 - 2- Իւրաքանչիւր Միութիւն, կարող է մասնակցել 2 տղայոց եւ 2 օրիորդաց խմբերով երիտասարդական եւ երեց բաժանումներով:
- Ծանօթ.** Երիտասարդական բաժնին կարող են մասնակցել այն մարզիկները, որոնք ծնած լինեն 1.1.1990-ից (11.10.1368) յետոյ:
- 3- Իւրաքանչիւր խումբ, կարող է ներկայացնել առաւելագոյնը 12 մարզիկ-ուհիներ:
 - 4- Վոլէյբոլի մրցութեան յաղթող խումբը, պէտք է շահի խաղի շարանից՝ 5-ից 3-ը:



Խաղերի նիշերը կը տրուեն ըստ հետեւեալի՝

ա. Յաղթանակ՝	2 նիշ
բ. Պարտութիւն՝	1 նիշ
գ. Բացակայ՝	0 նիշ

5- Հազուատների թւանշանները պէտք է փաքցւած լինեն կրծքի եւ մէջքի վրայ:

6- Լիբերոյի ունենալու պարագային խմբի պատասխանատուն պիտի նախապէս յայտնի խաղի իրաւարարին եւ տարբեր հազուատ ներկայացնի:

Դ. Պինգ - Պոնգ - երկսեռ

1. Իւրաքանչիւր Միութիւն, կարող է մասնակցել 4 տղայոց եւ 4 օրիորդաց խմբերով՝ խմբային խաղերում, թէ՛ օրիորդաց եւ թէ՛ տղայոց բաժիններում՝ առանց տարիքի սահմանափակման:

Ծանօթ. 1 Խմբային խաղերը տեղի կունենան ազատ: (Առանց տարիքի սահմանափակման):

Ծանօթ. 2 Իսկ անհատական խաղերը՝ թէ՛ օրիորդաց եւ թէ՛ տղայոց, տեղի կունենան երիտասարդական եւ աւագ բաժիններում:

2. Տղայոց եւ Աղջկանց բաժիններում, մրցութիւնները տեղի կունենան անհատական եւ խմբային:

3. Իւրաքանչիւր Միութիւն, տղայոց բաժնում՝ կարող է ներկայացնել առաւելագոյնը 5 հոգուց բաղկացած խումբ, իսկ օրիորդաց բաժնում՝ առաւելագոյնը 4 հոգուց բաղկացած, որոնք կարող են մասնակցել թէ՛ խմբային եւ թէ՛ անհատական բաժիններին: Անհատական խաղերին, կարող են մասնակցել Միութիւնների ներկայացրած խմբերից տղայոց՝ 10 եւ օրիորդաց՝ 8 մարզիկ-ուհի (ըստ իրենց նախընտրութեան):

Ծանօթ. Այն Միութիւնները, որոնք չեն մասնակցում խմբային մրցութիւններին, կարող են անհատական մրցութիւններին մասնակցել թէ՛ տղայոց եւ թէ՛ օրիորդաց բաժնում՝ առաւելագոյնը 3 հոգով:

4. Բոլոր խմբերի մարզիկները, պէտք է ունենան մարզական զգեստ: Զգեստի շապիկը չպիտի խաղի գնդակի հետ միագոյն լինի:



5. Օրիորդաց եւ տղայոց խաղերը լինելու է 2 բաժնում ,երիտասարդական(21 տարեկանից ցած) եւ աւագ (21 տարեկանից վեր):

Ե. Թեմիս - երկսեռ

1. Իւրաքանչիւր Միութիւն, խաղերին կարող է մասնակցել միայն 4 տղայոց եւ 3 օրիորդաց խմբերով՝ 2 երիտասարդական 2 աւագ խումբ:
2. Խմբային մրցութիւնները (3-ից աւելի խմբեր մասնակցելու պարագային) կը կատարի առանց տարիքային սահմանափակման:
3. Խմբային խաղերից բացի՝ տեղի են ունենալու նաեւ անհատական խաղեր:
4. Անհատական խաղերը տեղի են ունենալու երկու բաժիններում՝ ազատ և 16 տարեկանից ցած:
5. Նաեւ լինելու է ազատ դուրլ խաղեր:

Զ. Թեթեւ-ատլետ- երկսեռ

1. Իւրաքանչիւր Միութիւն, կարող է մասնակցել 1 տղայոց եւ 1 օրիորդաց խմբերով:
2. Բոլոր մարզիկները, կարող են մասնակցել 3 անհատական եւ 1 խմբային բաժնին:
3. Թեթեւ-ատլետի անհատական որեւէ բաժնին, իւրաքանչիւր խմբից կարող են մասնակցել միայն 3 մարզիկ, իսկ խմբային բաժնին՝ 2 խումբ:
4. Խմբերի դասաւորումը, պէտք է 2 օր մրցութիւնից առաջ, ներկայացւի մրցութիւնների պատասխանատուին՝ վիճակահանութեան համար:
5. Թեթեւ-ատլետի որեւէ ճիւղում, պայմանները լրացնող մասնակցողների թիւը 3-ից պակաս լինելու պարագայում՝ մրցութիւն տեղի չի ունենայ:
6. Նիշերը նկատի է առնւելու առաջինից վեցերորդ շահողների համար 7-ից 1:
7. Այն մարզիկները, որոնք մրցութիւնների ընթացքում Իրանի մրցանիշին հաւասար կամ աւելի բարձր նիշ արձանագրեն, կարժանանան առանձին գնահատանքի:



8. Թեթև-ատլետի մրցութիւնները տեղի կունենան ըստ հետեւեալի՝

<u>ՏՂԱՅՈՑ</u>	<u>ՕՐԻՈՐԴԱՑ</u>
1) 100 մետր	1) 100 մետր
2) 200 „	2) 200 „
3) 400 „	3) 400 „
4) 800 „	4) 800 „
5) 1500 „	5) 1500 „
6) 5000 „	6) 3000 „
7) 4 x 100 „, եւ 4 x 400	7) 4 x 100 „, եւ 4 x 400
8) Հեռացատկ	8) Հեռացատկ
9) Գնդի հրում	9) Գնդի հրում
10) Սկաւառականետում	10) Սկաւառականետում
11) Նիզականետում	11) Նիզականետում
12) Եռացատկ	

Է. Ճատրակ - երկսեռ

1. Իւրաքանչիւր Միութիւն, խաղերին կարող է մասնակցել անհատական դրւածքով (երիտասարդական եւ աւագ)՝ իւրաքանչիւր բաժնում՝ 6 մարզիկով:
2. Իւրաքանչիւր Միութեան պատասխանատու, պէտք է նախքան մրցութիւնը, մարզիկների քարտերը յանձնի իրաւարարի սեղանին:
Եթէ որեւէ մասնակցող, մրցութեան ճշտւած ժամից մինչեւ 15 րոպէ անց ներկայ չգտնւի մրցութեան, պարտւած կը համարւի:
3. Խաղերը կը ընթանան համաձայն ճատրակի ֆեդերացիայի կողմից ճշտւած կանոնների:
4. Երիտասարդական խաղերին, չեն կարող մասնակցել օրիորդաց համար՝ 1.1.1992-ից (11.10.1370), իսկ տղայոց համար 1.1.1993-ից (11.10.1371) առաջ ծնւածները:
5. Խաղերը կընթանան Շւեցարական ձեւով կամ շրջանային (دورہ ای):



Թ. Լող - երկսեռ

Լողի մրցութիւնները, տեղի կը ունենան ըստ հետեւեալի՝

Օրիորդաց երիտասարդական

33 մետր - 66 մետր	ազատ լող-անհատական
33մետր - 66 մետր	բրաս
4x33 մետր	ազատ - խմբային

Օրիորդաց աւագ

33մետր-66 մետր-100 մետր	ազատ լող-անհատական
66 մետր-100 մետր	բրաս
4x66 մետր	ազատ – խմբային

Տղայոց երիտասարդական

33 մետր-66 մետր-100 մետր	ազատ լող-անհատական
33 մետր-66 մետր	բրաս
4x33 մետր	խմբային

Տղայոց աւագ

66 մետր-100 մետր-200 մետր	ազատ անհատական
66 մետր- 100 մետր	բրաս
66 մետր	բաթրֆլայ
4x66 մետր	խմբային

1. Լողի մրցութիւնների երիտասարդական բաժնին կարող են մասնակցել այն մարզիկ-ուիիները, որոնք ծնւած լինեն Աղջկանց պարագային՝ 1.1.1986-ից (11.10.1366) եւ տղայոց պարագային՝ 1.1.1989-ից (11.10.1367) յետոյ:
2. Իւրաքանչիւր մարզիկ, կարող է մասնակցել բոլոր ճիւղերին:
3. Անհատական մրցոյթում՝ 4-ից պակաս եւ խմբային մրցոյթում՝ 3-ից պակաս մրցակից լինելու պարագայում՝ խաղերը տեղի չեն ունենայ:



Հ.Մ.Ա.Կ.- Ի

40-րդ Համահայկական խաղեր

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սոյն կանոնագրութեան մէջ չնախատեսուած կանոնների գործադրումը կը կատարւի համաձայն երկրի մարզական և մրցաշարերի օրէնքների:

Հ.Մ.Ա.Կ.- Ի
40- րդ Համահայկական
խաղերի Յանձնախումբ